10919

Ա. ՃՈՒՂՈՒՐ

ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԼԱԳԵՐԸ

ՏՇՐԱՏ ≡ 1933 ≡ ՅԵՐԵՎԱՆ

3 Кюп
Ъ 97

09 DEC 2009
24 SEP 2008

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

ՀԼԿՑԵՄ. ԿԿ-ԻՆ ԿԻՑ ՊՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ЭКЮП
Ъ-97
Ц7

ԱՇՈՏ ՀՈՒՊՈՒՐ

ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԼԱԳԵՐԸ

1010
42813

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ—1933

2 0 JUN 2013

109/9

Խմբագրեց Ս. Սարգսյան
Սրբագրիչ Գար. Հակոբյան
Հանձնված է արտադրության 3 մայիսի 1933 թ.
Ստորագրված է տպելու 10 հունիսի 1933 թ.
Ֆորմատ 5×8
Պետհրատի տպարան,

Գլավիտ № 8127 (բ) պատվեր № 1098, տիրաժ 3000

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԵՆՔ ԱՌՈՂՋ ՅԵՎ ՈՒԺԵՂ ՄԱՐՏԻՆԵՐ

Հատկապես նրան, այդ յերիտասարդությանն է վիճակված վերջացնել, ավարտել կոմունիզմի գործը, հատկապես նրան է դեռևս վիճակված պայքար մղել կոմունիզմի համար, և նա այդ պայքարին պետք է դիմավորի ամուր, առողջ, պողպատյա նյարդերով ու յերկաթյա մկաններով:

Լենին

Սոցիալիստական հասարակակարգի կառուցումը մեր յերկրում պահանջում է՝ առողջ, ֆիզիկապես ուժեղ, կոմունիստորեն դաստիարակված, սոցիալիստական շինարարության բովում կոփված մարտիկներ: Ահա թե ինչպիսի սերունդ է մեզ հարկավոր:

Պիոներական կազմակերպությունը վորպես այդ սերնդի կազմակերպիչն ու ղեկավարը, իր մեծ յեղբայր կոմյերիտմիության հետ լծվել է այդ սերնդի պատրաստման և դաստիարակման մեծ գործին: Վորովհետև այդ սերնդին է վիճակված սոցիալիզմի կառուցման վերջնական ավարտումը, նրան է վիճակված դալիք մարտերում պայքարելու, հաղթանակելու մեր ընդհանուր գործի—բանվոր դասա-

կարգի գործի հաղթանակի համար, և «այդ պայքարին նա պետք է դիմավորի ամուր, առողջ, պողպատյա նյարդերով ու յերկաթյա մկաններով:» Միջազգային պրոլետարիատի առաջնորդի, բայլշևիկյան կուսակցության կազմակերպչի ու մեծ հանճարի—ընկ. Լենինի այս ցուցմանքը մեզնից պահանջում է ամենամեծ հոգատարություն դեպի աճող սերնդի առողջապահության ամրացման գործը:

Հենց ընկ. Լենինի այդ հայտնի ցուցմունքի հիման վրա է, վոր մեր կուսակցությունը, խորհրդային իշխանությունն այնքան խոշոր ուշադրություն են դարձնում յերեխաների առողջության ամրացման և ֆիզիկական դաստիարակության վրա:

Ամեն տարի բացվում են նորանոր սանատորիաներ, հանգստյան տներ, ամառային մանկական հրապարակներ, առողջապահական կայաններ, լագերներ, յերեխաների համար. ամեն տարի ավելանում է առողջապահական ձեռնարկներում ընդգրկված յերեխաների թիվը: Այդ միջոցառումները հսկայական չափով բարելավել են յերխաների առողջապահական վիճակը, կազդուրել են նրանց ֆիզիկապես: Միայն պիոներական լագերներով—վորոնք Հայաստանում սկսել են 1926 թ.—անցել են մոտ 25,000 բանվորների ու աշխատավորների յերեխաներ, վորի համար պետությունը ծախսել է տասնյակ միլիոն ռուբլի:

Սոցիալիստական շինարարության բուռն վերելքի հետ միասին ավելացվում են յերեխաների առողջապահության համար հատկացվող ֆոնդերը և ընդարձակվում են նրանց սպասարկող սանատորիաներն ու հանգստյան տները, մանկական մսուրներն ու հրապարակներ:

Հայաստանում 7 տարվա լագերների փորձը ցույց տվեց, վոր պիոներական լագերները հանդիսանում են՝ աճող սերնդի առողջապահական ու ֆիզիկական դաստիարակության ամենամասսայական ձևը, այս տեսակետից էլ ուշադրությունը պետք է կենտրոնացնել լագերների ցանցի հետագա լայնացման, ավելի շատ թվով յերեխաներ լագեր դուսը բերելու գործին:

Պիոներական լագերները միմիայն յերեխաների առողջապահության համար չեն. գլխավոր նպատակն այդ է, բայց և այնպես պիոներական լագերները հսկայական նշանակություն ունեն նաև աճող սերնդի կոմունիստական–ինտերնացիոնալիստական դաստիարակության, կոլեկտիվ կյանքին ու աշխատանքին ընտելացնելու, ձուլելու տեսակետից:

1933 թվի պիոներական լագերների կազմակերպման համար, կուսակցական, կոմյերիտական և խորհրդային բոլոր կազմակերպությունները պետք է գործնական աշխատանք ծավալեն:

Համկոմկուսի Կենտկոմը՝—պիոներ կազ-

մակերպության մասին իր ապրիլի 21-ի վորոշման մեջ հատուկ սրությամբ դրեց յերեխաների առողջապահական աշխատանքների ուժեղացման խնդիրը։ Կենտկոմը նշեց վոր՝ «Պայքարը հանուն առողջ փոխարինողների, պետք է հանդիսանա խորհուրդների և պրոլետարական պետության, արհմիությունների, կոմյերիտմիության ու բոլոր հասարակական կազմակերպությունների (ֆիզկուլտուրայի, «Մանուկների բարեկամների ընկ.», «Կ. Խաչ»-ի և այլն) և ընդհանրապես բովանդակ խորհրդային հասարակության առորյա հոգատարության առարկան, այդ խնդիրը պետք է հանդիսանա պիոներական կազմակերպության աշխատանքի բովանդակության կարևորագույն տարրերից մեկը»։

Մեր բոլոր կազմակերպությունները, կուսակցության մարտական շտաբի դիրեկտիվի կենսագործման հիման վրա, վճռաբար պետք է բարելավեն իրենց աշխատանքը մանկական մասսաների մեջ, հատկապես նրանց առողջապահական աշխատանքները բարելավելու համար, ուշադրությունը կենտրոնացնելով 1933 թվի պիոներական լագերների կազմակերպման դործին։

Պիոներական կազմակերպությունը և նրա յուրաքանչյուր կոլեկտիվն իր առորյա դործնական աշխատանքների ընթացքում յերբեք աչքաթող չպետք է անի առողջապահական ու ֆիզկուլտ շախատանքները։

Հենվելով 7 տարվա պիոներական լագերների հարուստ փորձի վրա, հաշվի առնելով անցյալի սխալներն ու թերությունները, մեր բոլոր կազմակերպությունները պետք է բայլ-չևիկորեն ձեռնամուխ լինեն 1933 թ. պիոներական լագերների նախապատրաստական ու դործնական աշխատանքներին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լաղերի կազմակերպումը հեշտ գործ չէ, ինչպես շատերն են կածրում: Լաղերի կազմակերպումը բավականի դժվար ու պատասխանատու աշխատանք է, որը պահանջում է լուրջ, կազմակերպված նախապատրաստական համառ աշխատանք:

Պիոներական լաղերի առաջ դրված չափազանց պատասխանատու խնդիրների լուծումը, նրա ողջ աշխատանքների հաջողությունը կախված է՝ կազմակերպված, հաջող նախապատրաստական աշխատանքից:

Հայաստանի պիոներական կազմակերպությունը, մի քանի տարվա լաղերի թե՛ նախապատրաստական և թե՛ գործնական աշխատանքների փորձեր է կուտակել. այդ փորձերի հիման վրա յե, որ մենք այս տարի պետք է կազմակերպենք պիոներական լաղերները: Սակայն անցյալ տարիների լաղերների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքում հսկայական թերություններ ու բացեր են նկատվել, որոնք ևս պետք է հաշվի առնել՝ այս տարի չկրկնելու համար:

Ո՞ր բոնք եյին անցյալ տարվա բացերն ու թերությունները նախապատրաստական աշխատանքների ընթացքում:

1. Նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին ուշացած, լաղեր դուրս գալու նախորյակին, որի պատճառով պիոներ բյուրոներն ու կոլեկտիվներն ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին լաղերների նախապատրաստական աշխատանքների վրա, մոռացության տալով տեղի աշխատանքները, ամառային առողջապահական մյուս աշխատանքները (մանկական ամառային հրապարակների կազմակերպում, եքսկուրսիաներ և այլն): Մյուս կողմից՝ այդ կարճ ժամանակամիջոցը հնարավորություն չտվեց նախապատրաստական աշխատանքները խորացրած, կազմակերպված ձևով անցկացնելու համար:

2. Բանվորական կոլտնտեսական ու աշխատավորական մասսաների մեջ բավարար չափով հասարակական կարծիք չստեղծվեց լաղերների շուրջը. այս հանգամանքն ոգտագործեցին մեղ թշնամի տարրերն ու սկսեցին լաղերների շուրջը պրովակացիաներ տարածել:

3. Մի շարք ոդակներում նյութական միջոցներ չկարողացան ստեղծել, որի հետևանքով, մի շարք շրջաններից վոչ մի պիոներ լաղեր դուրս չեկավ:

4. Վերջապես՝ չորրորդ բացը կայանում եր նրանում, որ նախ քան լաղեր բարձրանալը տեղերում ինչպես պետքն եր կազմակերպչական աշխատանք չտարվեց, որի պատճառով

լագերային որերից 6–7, նույնիսկ 10 որ հատկացրել են կազմակերպչական աշխատանքների–կոլեկտիվների, գնդերի ձևավորումը (Ցերեվան, Լենինական և այլն)։

Հաշվի առնելով անցյալի՝ վերը բերած և նման մի շարք այլ բացերն ու թերությունները, այժմյանից յուրաքանչյուր կոմյերիտական ջջիջ, պիոներ բյուրո, բազա, կոլեկտիվ ու ողակ պետք է ծավալեն գործնական, լուրջ կազմակերպված աշխատանք, պիոներական լագրների կազմակերպումը նախապատրաստելու համար։

Նախապատրաստական աշխատանքների հիմնական խնդիրները կայանում են հետևյալում.

ա) վողջ բանվորական, կոլտնտեսական ու խորհրդային հասարակայնության մեջ ընտեղծել հասարակական–մասսայական լայն կարծիք՝ լագրների շուրջը.

բ) լագերի համար ստեղծել նյութական հաստատուն բազա, պատրաստել լագերի ամբողջ ինվենտարը.

գ) ավարտել կազմակերպչական աշխատանքները—կոլեկտիվների, գնդերի ձևավորումը—լագերի համար պատրաստել ու վերապատրաստել վորակյալ կադրեր, ավարտել լագերի կառուցումը։

Սրանք են հիմնականում, լագերի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների հիմնական խնդիրները։

ա) Հասարակական լայն կարծիք ստեղծել լագերի շուրջը

Պիոներական լագերների կազմակերպման ու նրա հետագա հաջողությունների հիմնական նախապայմաններից մեկ լագերի շուրջը, վողջ բանվորական, կոլտնտեսական ու աշխատավորական մասսաների մեջ հասարակական կարծիք սեռղծելու աշխատանքն է։

Անցյալ տարի ծնողների մեջ բացատրական աշխատանքները բավարար չափով չկազմակերպելու հետևանքով, մի շարք ծնողներ (հատկապես շրջաններում) արգելք հանդիսացան իրենց յերեխաների լագեր գնալուն։ Բացատրական թույլ աշխատանքը ոգտագործեցին մեզ թշնամի տարրերը՝ կուլակները, նեպմանները, կրոնականները, վորոնք սկսեցին պրովակացիաներ տարածել լագերի շուրջը, Վորպիսի հանգամանքը մի շարք ողակներում թողեց իր բացասական ազդեցությունը։ Վոչ վոք իր մտքից չպետք է հանի այն, վոր դասակարգային թշնամին, ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես փորձ կանի այս կամ այն կերպ ձախողել լագերի գործը, արգելքներ ստեղծելով աճող սերնդի կոմունիստական

դաստիարակության համար այնքան խոշոր նշանակություն ունեցող այս աշխատանքների դեմ: Ահա թե ինչո՛ւ պետք է աջալուրջ լինել, դասակարգային զգնություն ունենալ՝ տեղն ու տեղը ջախջախելու համար դասակարգային թշնամու վոտնձգությունները:

Պիոներական կոլեկտիվները կոմյերիտական բջիջների հետ միասին ու նրանց ղեկավարությամբ, վորոնց վրա յե ընկնում լագերի կազմակերպման պատասխանատվությունը, այժմյանից ագիտացիոն-բացատրական աշխատանք պետք է ծավալեն լագերի շուրջը: Այս նպատակով անհրաժեշտ է դումարել բանվորական, կոլտնտեսական, պրոֆմիութենական կոլեկտիվների և ծնողների ժողովներ, կազմակերպել զրույցներ, զեկուցումներ՝ յերեխաների առողջապահության ամրապնդման մասին, լագերի նշանակության, նպատակների ու խնդիրների մասին:

Այդ ժողովներում մանրամասն թվական տվյալներով, դիագրամներով, պլակատներով, կենդանի լրագրերի միջոցով, կոնկրետ փաստերով ցույց տալ անցյալ տարվա լագերների արդյունքները. ցույց տալ մանուկների առողջապահության գործում լագերների ունեցած դրական արդյունքները:

Պիոներական բաղաները, կոլեկտիվներն ու ողակները պետք է հրատարակեն պատի լրագրեր, պատրաստեն լոզունգներ, պլակատներ՝ նվիրված լագերների նշանակության ու նպատակների մասսայականացմանը, նրանց նախապատրաստական աշխատանքներին:

բ) Լագերի համար ստեղծել նյութական հաստատուն բազա

Պիոներական լագերի կազմակերպման համար ամենից առաջ անհրաժեշտ են նյութական միջոցներ. առանց այդ լագեր կազմակերպել յերբեք հնարավոր չէ: Հայտնի յե բոլորին, վոր անցյալ տարի, մի շարք պիոներական կոլեկտիվներից, նույնիսկ առանձին շրջաններից (Աղբաբա, Մեղրի և այլն) վոչ մի պիոներ լագեր դուրս չեկավ, վորովհետև այդ կոլեկտիվներն ու շրջբյուրոները փողի մասին չեյին մտածել, ձեռքերը ծալել նստել եյին, ոպասելով, թե ինչ վոր մեկը նրանց փող պետք է տա: Այդպես մտածել նշանակում է վիժեցնել լագերի գործը:

Յուրաքանչյուր պիոներբյուրո, կոլեկտիվ ու ողակ պետք է լավ հասկանան, վոր մեր պետական բյուջեն խիստ ծանրաբեռնված է, վոր խորհրդային իշխանությունը յուրաքանչյուր կոպեկ խնայում է յերկրորդ հնգամյակի հսկայական պլանը կատարելու համար, հետևաբար մենք չպետք է ձեռներս ծալենք ու նստենք՝ աչքներս հառելով դեպի պետական բյուջեն. առանց այն էլ կուսակցությունը, կառավարությունը հսկայական գու-

մարներ են ծախսում պիոներական լագերների և ընդհանրապես յերեխաների առողջապահության աշխատանքների համար:

Մենք պետք է ոգտագործենք մեր ներքին միջոցները, գործնական աշխատանք ծավալենք նյութական միջոցներ ստեղծելու բոլոր միջոցառումների համար:

Յուրաքանչյուր պիոներական կոլեկտիվ, համաձայն պիոներ բյուրոյից ստացած լաթերը դուրս յեկող պիոներների թվի ու դանձվելիք գումարի քանակի, այժմյանից պետք գործնական աշխատանք ծավալի այդ գումարը ձեռք բերելու համար: Դրա համար պետք է գումարել պրոֆմիութենական, ծնողական, կոլանտեսական ժողովները, կազմակերպել դեկուցումներ լագերի նյութական միջոցների մասին, սպա անցկացնել նվիրատվություններ՝ լագերի համար: Բացի այդ, կոլեկտիվները պետք է կազմակերպեն յերեկույթներ, ցերեկույթներ, կինո սեանսներ, կենդանի լրագրեր, գրքերի վաճառք և այլն, ստացած գումարները տրամադրելով լագերի Ֆոնդին:

Ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքներում պետք է կազմակերպել լագերային հանձնաժողովներ՝ Կուս և ԼԿՅԵՄ կազմակերպությունների, գյուղխորհրդի (քաղաքում քաղխորհրդի) և զանազան չահագրգռված կազմակերպությունների ներկայացուցիչներից: այդ հանձնաժողովները զբաղվում են

լագերի նախապատրաստական, գլխավորապես, նյութական միջոցների, ինվենտարի պատրաստման գործով:

Պիոներական բյուրոները նույնպես պետք է կազմակերպեն շրջանային ու քաղաքային լագերային հանձնաժողովներ, համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Համկոմկուսի Կենտկոմը Պիոներկազմակերպության մասին 1932 թվի ապրիլ 21-ի վորոշման մեջ հատուկ սրությամբ դրեց յերեխաների առողջության ամրացման գործում՝ պրոֆմիության, Առժողկոմատի, Կ խաչի, Սոցապգանձարկղի, Ֆ. կ. կազմակերպությունների, Մանուկների բարեկամների ընկերության, Լուսժողկոմատի կատարելիք աշխատանքները վճռաբար բարելավելու հարցը:

Կուսակցության մարտական շտաբի դիրեկտիվների կենսագործման հիման վրա վերոհիշյալ կազմակերպություններն ու որգանները վճռաբար պետք է բարելավեն իրենց աշխատանքը հատկապես յերեխաների առողջապահության ամրացման գործում, ամենաջին հերթին նյութական ոգնության հասնելով պիոներական լագերների կազմակերպման աշխատանքներին: Առանց այդ կազմա-

կերպությունների գործնական ղեկավարության հնարավոր չէ իրականացնել լաղերների կազմակերպման, այդ պատասխանատու խնդիրը:

դ) Լրիվ հաշվի առնել ու պատրաստել լաղերի ինվենտարը

Լաղերի համար տարվող նախապատրաստական աշխատանքների մյուս կարևորագույն խնդիրը՝ վրանների, գործիքների, խոհանոցի իրերի և այլ անհրաժեշտ ինվենտարի պատրաստումն է:

Զավիազանց ուշադրավ են մի քանի փաստեր, այն է՝ թե ի՛նչպես անցյալ տարի լաղերներում ամենահասարակ ինվենտարի բացակայությունը բացասական ազդեցություն թողեց լաղերների ընդհանուր աշխատանքների վրա: Ծաղկաձորի– այդ ամենահին լաղերում ճաշ լցնելու շերեփներ քիչ լինելու պատճառով, մի շարք կոլեկտիվներ ճաշն ուշ եկին ստանում, խախտելով ռեժիմը. իսկ որվա ռեժիմ խախտել նշանակում է խախտել ինչպես առողջապահական, այնպես և լաղերի ընդհանուր կանոնները, մի բան, վոր լաղերային-պայմաններում միանգամայն անթույլատրելի երևույթ է: Լենինականի լաղերում, վրաններ քիչ լինելու հետևանքով, մի վրանի տակ 6–8 պիոների փոխարեն քնում էին 10–15 պիոներ, վորպիսի հանգամանքը ստեղծում էր սանիտարական աննորմալ պայմաններ վրաններում:

Լապտերներ քիչ լինելու պատճառով, մի շարք վրաններում, յերեխաները մութ տեղն էին հանվում քնելու համար: Զանազան խաղեր՝ բասկեդբոլի, վալեյբոլի, դարադկիի ինվենտարը չափազանց քիչ լինելու համար բոլոր յերեխաները հնարավորություն չունեին, ուղղակի ասած, խաղալու:

Այս տարի այդպիսի դրություն չպետք է հանդուրժել: Դրա համար անհրաժեշտ է նախապես հաշվի առնել, թե ի՛նչքան և ի՛նչ ինվենտար կա, ի՛նչն է պակասում, ի՛նչն է անհրաժեշտ վերանորոգելու համար:

Պիոներական բյուրոներն յելնելով իրենց լաղերի ընդհանուր պահանջներից, պետք է կազմեն ամբողջ պահանջվելիք ինվենտարի ցուցակը, այնուհետև յուրաքանչյուր կոլեկտիվին խնդիր տան թե նա ի՛նչ պետք է վերցնի իր հետ լաղեր գնալիս: Այդ ցուցակների հիման վրա՝ բյուրոները, կոլեկտիվներն ու ղեկավարները իրենց հերթին պետք է գործնական աշխատանք ծավալեն՝ կարճ ժամանակամիջոցում այդ ինվենտարը պատրաստելու համար:

Այստեղ եական նշանակություն ունի նաև այն, թե ի՛նչ պետք է վերցնի իր հետ յուրաքանչյուր լաղեր գնացող պիոներ: Յերբ պարզվի տվյալ պիոների լաղեր գնալու հարցը պետք է նրան խնդիր տալ, թե նա ի՛նչ պետք է վերցնի իր հետ լաղեր գնալիս:

1010/42813
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Ընդհ. Գիտական Գրադարան
ՀԱԽՀ – ՍՍՌԱ
Ա. Մասիսյանի անվան

դ) Ի՞նչ ինվենտար է հարկավոր լագերին

Մենք այստեղ տալիս ենք այն անհրաժեշտ ինվենտարի մոտավոր ցուցակը, որ անհրաժեշտ է լագերին: Ցուրաքանչյուր բյուրո պետք է հաշվի առնի իր լագերի մեծությունը, յերեխաների քանակը և ըստ այնմ ձեռք բերի համապատասխան ինվենտարը:

1. Վրաններ
2. Թախտեր
3. Քլունգներ (փոքր զինվորական)
4. Բահեր (փոքր զինվորական)
5. Թիակներ (փոքր զինվորական)
6. Կացիններ (փոքր զինվորական)
7. Մուրճեր
8. Ուրագներ
9. Սղոցներ
10. Պարան
11. Խոիր
12. Ֆանտերկաններ— մթերքի պահեստների, խոհանոցի, ֆոտո լաբորատորիայի, արտաքնոցների և այլ կառուցումների համար:
13. Փայտեր—ռեյկաներ—վրանի ցցեր՝ հենարանների համար:
14. Փոքր լապտերներ—վրանների համար
15. Կարբիդի լապտեր կամ մեծ դաղավոյ լամպա՝ ամբողջ լագերը լուսավորելու համար:

Խոհանոցի համար

1. Պղինձներ (ճաշ պատրաստելու համար)
2. Դուլլեր
2. Շերեփներ (ճաշի)
4. Մսի մեքենաներ
5. Ֆարսոնկաներ
6. Փայտե տակառներ
7. Մեծ տաշտեր (մալերովնի) միս լվանալու համար
8. Դանակներ
9. Թեյի տերմոսներ
10. Թեյնիկներ
11. Ավելներ, ցախավելներ
12. Մաղութ
13. Սրբիչներ
14. Լվացարաններ
15. Լվացքի և ձեռքի սապոն
16. Նավթ—լապտերների համար
17. Հարթուկներ
18. Հագուստներ լվանալու մեծ տաշտեր:

Ռազմա-ֆիզկուլտուրային

1. Հրացաններ—(դեկո)
2. Փամփուշտներ
3. Հակաղաղեր
4. Փոքր դրոշակներ—նշանախոսության համար

65. Կավիճ–(մել)–հետախուզական աշխատանքների համար
6. Գնդակներ
7. Վալեյբոլ
8. Բասկետբոլ
9. Տենիս
10. Գարադկի
11. Շախմատ–չաշկի, և զանազան խաղեր.
12. Զանազան ֆիզկուլտ դործիքներ:

Մասայական–կուլտուրական

1. Կինո ապարատ
2. Ֆոտո ապարատներ
3. Ռադիո ապարատներ ու բարձրախոսներ, անտենա.
4. Գրադարաններ
5. Գրենական պիտույքններ
6. Պատի լրագրերի համար տախտակներ
7. Կարմիր ու սև տախտակներ.
8. Նամակների (փոստային) արկղ
9. Թերթերի բաժանորդագրություն

Բուժկայանի համար

1. Անհրաժեշտ քանակությամբ ու տեսակի դեղորայք
2. Առանձին փոքրիկ ապտեչկաներ—(դեղորայքով)

3. Ֆերինկսի կշեռք
4. Չերմաչափեր
5. Ժամացույց
6. Յեղունդների խողանակներ
7. Սանրեր
8. Չրամաններ (բակլաժկա)
9. Ճիլոփներ
10. Ձեռքի սապոն
11. Դեղորայքի կշեռք
12. Սառցի տոպրակներ
13. Շպաղել փայտեր

Ահա ինվենտարի, դործիքների, խաղերի ու բուժկայանի համար անհրաժեշտ իրերի այն մինիմումը, վոր անպայման պետք է ունենա: յուրաքանչյուր լաղեր:

Ի՞նչ պետք է վերցնի իր հետ. պիոներ կոլեկտիվը

Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, վոր պիոներ կոլեկտիվները, բացարձակորեն չեն զբաղվում ինվենտարի պատրաստման խնդրով. նրանք հույս են դնում պիոներ բյուրոների վրա:

Այս տարի վերջ պետք է տալ այս պրակտիկային: Պիոներական բյուրոները լաղերի ինվենտարից վորոշ մասը պետք է հանձնարարեն պիոներ կոլեկտիվներին ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր պիոներկոլեկտիվ, անկախ ընդհանուր լաղերի համար ձեռք բերած ինվենտարից, ինքը պետք է կազմ ու պատ-

բաստ, անհրաժեշտ ինվենտարներով ու գործիքներով դուրս գա լագեր։

Անհրաժեշտ է, որ լագեր գնացող յուրաքանչյուր պիոներկոլեկտիվ առնվազն ունենա հետևյալը։

1. Ֆլունգ
2. Մուրճ
3. Բահ
4. Կացին
5. Ուրագ և սղոց
6. Լապտերներ (2 հատ)
7. Զույգ դրոշակախոսության համար փոքր դրոշակներ։
8. Կողմնացույց և ժամացույց
9. Դեղատուփ (ապտեչկա) անհրաժեշտ դեղորայքով ու վիրակապով։
10. Ճաշի չերեփ և դույլ
11. Կոլեկտիվի դրոշակը, Շեփորն ու թմբուկը
12. Թիթեղյա փոքր տաշտ-հագուստներ լվանալու համար։
13. Ավել
14. Փոքրիկ գրադարան-գրականությամբ։
15. Ռադիո ապարատ (յեթե ունի կամ կարող է ձեռք բերել)
16. Վալեյբոլ, բասկետբոլ, դարաղկի, Շախմատ, Շաշկի
17. Կավիճ-հետախուզական նշանների համար։

18. Հուշատետր, պատի լրագեր թղթեր, գրենական պիտույքներ
19. Թերթերի բաժանորդագրություն
20. Կարմիր ու սև տախտակ
21. Իր վրանը
22. Ֆոներկա կամ տախտակ-սեղանի տեղ գործածելու համար։

Ի՞նչ պետք է վերցնի իր հետ լագեր գնացող պիոները

1. Վերմակ
2. Մեծ տոպրակ-ներքնակի տեղ, բարձ
3. Վերարկու-անպայման
4. Իր ամբողջ հագուստները, յերկու զույգ սպիտակեղեն և 2 զույգ նասկի ու թաշկինակներ
5. Մատիտ և անձնական հուշատետր
6. Դասագրքերն ու տետրակները
7. Ատամի փոշի, խոզանակ և ձեռքի սապոն
8. Յերես սրբիչ
9. Փոքրիկ դեղատուփ, վորը պետք է ունենա՝ վիրակապ, բամբակ, յոդ, մարլա, և սպիրտ։
10. Լուցկի և քորոցներ
11. Ասեղ, սև և սպիտակ կոճի թելեր
12. Դանակ, գդալ և պատառաքաղ
13. Ափսե-ճաշի համար (մետաղից)
14. Ճանապարհորդական ջրաման-(բակլաժկա)

15. Ճանապարհորդական պայուսակ
16. Բաժակ–թեյի, ջրի համար (մետաղե)
17. Թեյի դդալ
18. Կավիճ–հետախուզության համար
19. Մորզեյի այբուբենը
20. Հետախուզական նշանները
21. Թերթերի բաժանորդագրություն
22. Ցեթե հնարավոր է՝ ժամացույց և կողմնացույց

Ե) Նախապատրաստական–կազմակերպչական աշխատանքները

Հաջողությամբ ավարտելով լագերի շուրջը մասսայական–բացատրական աշխատանքները, նյութական միջոցների ստեղծումն ու վողջ ինվենտարի ու գործիքների պատրաստումը, պետք է ձեռնամուխ լինել նախապատրաստական աշխատանքների վերջին ու վճռական շրջանին–կազմակերպչական աշխատանքներին:

Պիոներական լագերի գործնական աշխատանքների հաջողությունը շատ բանով է կախված կազմակերպչական աշխատանքները նախորոք ավարտելուց:

Նախապատրաստական– կազմակերպչական շրջանի աշխատանքների հիմնական խնդիրներն են՝

ա) վերջնականապես ձևավորել լագերային պիոներական կոլեկտիվները,—ողակներն ու գնդերը.

բ) ավարտել լագեր գնացող պիոներների բժշկական քննությունը.

գ) ընտրել ու նշանակել լագերի ղեկավար կադրերն ու մարմինները՝ լաեգրի շտաբ, գընդերի շտաբներ, կոլվարներ, ողնականներ, ողակավարներ, աշխատանքի առանձին բնագավառներում աշխատող կադրեր և այլն:

Լագերի աշխատանքի բովանդակության ու վորակի բարձրացման համար խոշոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե ի՞նչ պես է մասսայականացված լագերի աշխատանքի բովանդակությունը, այս չափազանց կարեվոր հանգամանք է, դրա համար նախորոք լագերի աշխատանքի բովանդակությունը պետք է քննության առնել բոլոր կոլեկտիվներում ու ողակներում, թող յերեխաները իրենց առաջարկություններն ու լրացումներն անեն, թող յուրաքանչյուր աշխատող, յուրաքանչյուր պիոներ իմանա լագերի աշխատանքի բովանդակության խնդիրները:

Գնդերը, կոլեկտիվներն ու ողակները յելնելով լագերի աշխատանքի բովանդակության հիմնական խնդիրներից, պետք է կազմեն ամբողջ լագերի ընթացքում իրենց գործունեության պլանը՝ պիոներական լայն մասսաների մասնակցությամբ:

Լագերն ապահովել կադրերով

Պիոներական լագերի աշխատանքի բովանդակության ու վորակի բարձրացման հիմնական նախապայմանը՝ ղեկավար-վորակյալ կադրերն են· այս տեսակետից ել հատուկ ուշադրություն պետք է դարձնել լագերի համար ղեկավար կադրերի ընտրության ու նրանց պատրաստման գործին: Կոմյերիտական կոմիտեները, բջիջները ու պիոներ բյուրոները պետք է ստուգեն ու ընտրեն լավագույն հարվածային, պատրաստված կոմյերիտականներին, պիոներ աշխատողներին լագեր ուղարկելու համար-առանց սակայն ծայրահեղության մեջ ընկնելու, մոռանալով տեղի աշխատանքները· չպետք է վողջ կադրերը լագեր ուղարկել, իսկ տեղի աշխատանքները թողնել յերեսի վրա, ինչպես կատարվեց 1931 թվին:

Իհարկե ղեկավար կադրեր ստուգելով, ընտրելով գործը չի սպառվում, պետք է աշխատել այդ կադրերը պատրաստել, նրանց վորակավորել· դրա համար յուրաքանչյուր շրջկոմ ու պիոներ բյուրո պետք է կազմակերպի կարճատև դասընթացներ, սեմինարիաներ, կադրերը վերապատրաստելու համար: Այդ սեմինարիաներում, դասընթացներում հիմնականում պետք է քննել հետևյալ խնդիրները·

ա) կուսակցության ու կոմյերիտմիության

կողմից, պիոներ կազմակերպության առաջ ներկա ետապում դրված խնդիրները·

բ) առող սերնդի առողջապահության ամրացման, ֆիզկուլտ դաստիարակության խնդիրները·

գ) լագերի աշխատանքի բովանդակությունը, ձևերն ու մեթոդները·

դ) լագերի ռեժիմն ու կարգապահության ամրացումը և մի շարք պրակտիկ խնդիրներ, իրեն՝ լագերին վերաբերող:

Բացի կոլվարներից, ոգնականներից, լագերում մեզ համար պահանջվում են աշխատանքի դանազան բնագավառների վերաբերյալ հսկայական քանակությամբ կադրեր, վորոնց մասին ևս պետք է նախորոք մտածել՝ համապատասխան շահագրգռված կազմակերպություններից, ու որգաններից այդ կադրերը ձեռք բերելու համար:

Յուրաքանչյուր պիոներական լագերի համար անհրաժեշտ են մոտավորապես հետևյալ կադրերը·

1· Բժիշկներ
2· Բուժակներ
3· Մանկավարժներ
4· Ռազմական աշխատողներ
5· Ֆիզկուլտ հրահանգիչներ
6· Ռադիո մեխանիկ
7· Կինո մեխանիկ
9· Պարերի-յերգերի ղեկավարներ

8. Ֆոտո նկարիչ
10. Տուրիստական բնագիտական հետախուզական աշխատանքների ղեկավար
11. Լագերի պարետ:

Տնտեսական աշխատանքները

1. Տնտեսավար
2. Պահեստապետներ
3. Հաշվապահ
4. Խոհարար
5. Խոհանոցում տեխնիկական աշխատողներ
6. Հացթուխ
7. Մսագործ
8. Կոշկակար

Այս կադրերի ցուցակն, իրհարկե, չեն մտնում լագերի ղեկավար աշխատողները՝ շտաբի պետ, տեղակալ, կուլտուր մասսայական աշխատող և այլն:

Կազմակերպել փորձնական լագեր

Փորձնական լագերներ վորպես լագերային կյանքի նախապատրաստական շրջան չափազանց անհրաժեշտ են: Անցյալ տարիների փորձը ցույց է տվել, վոր լագերներում յեղել են պիոներներ, վորոնք 5–10 որ մնալուց հետո լագերից հեռացել են. այս յերեվույթը հատկապես մասսայական յերևույթ եր դյուղական պիոներների մեջ: Իհարկե այդ մասամբ ել հետևանք է նրա, վոր յերեխաներից շատերը առաջին անգամ մտնելով լագեր— կոլեկտիվ կյանքի ու աշխատանքի այդ միջավայրը—վորոշ ժամանակով կտրվում են իրենց ծնողներից. հենց այս հանգամանքն է վոր բացասաբար է անդրադարձել:

Ինչպես այս դրությունը կանխելու, այնպես և լագերի կյանքը նախապատրաստելու համար անհրաժեշտ է լագեր գնալու նախորյակին կազմակերպել 2–5 որ տեևողությամբ փորձնական լագերներ: Դրա համար, իհարկե, պետք է նախապատրաստական աշխատանք տանել, կազմակերպված ձևով դուրս գալ, և փորձնական լագերում հաստատել լագերի վոդջ կարգ ու կանոնը (ռեժիմը), աշխատանքը և այլն:

Փորձնական լագերները հսկայական չափով կնպաստեն պիոներ կոլեկտիվների ու պիոներների կազմ ու պատրաստ լագեր դուրս գալուն:

Հետազոտել ու ընտրել լագերի վայրը

Հայաստանի պիոներ կազմակերպությունը լագերների համար բազմաթիվ հարմար վայրեր ունի: Սակայն մինչև այժմ լուրջ գիտական հետազոտման չեն յենթարկել այդ վայրերը:

Այդ վայրերն ունեն իրենց թե դրական և թե բացասական կողմերը. սակայն լագերի նպատակն ու խնդիրները պահանջում են մե-

զանից այնպիսի վայրերում հիմնել լագերներ, որոնք իրենց կլիմայական պայմաններով ու բոլոր գծերով նպաստեն լագերի նպատակներին ու խնդիրներին:

Այդ տեսակետից ել այս տարի մեր առաջնակարգ խնդիրներից մեկն է վերջնականում դիտական հետազոտման յենթարկել լագերի վայրերը և առողջապահության տեսակետից ընտրել միանգամայն նպաստավոր վայրեր: Այս գործում խոշոր պարտականություն է ընկնում Առժողկոմատի վրա, որը պետք է կազմակերպի գիտական եքսպեդիցիա, պիոներական, Ֆիզկուլտ և համապատասխան կազմակերպությունների մասնակցությամբ, լագերի վայրերը հետազոտելու և ընտրելու համար:

Եքսպեդիցիա

Լագերի վայրի հետազոտական աշխատանքները, ինչպես նաև լագերի ամբողջ նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո պետք է կազմել հատուկ եքսպեդիցիա լագերի կառուցումն սկսելու համար:

Այս ասպարիզում նույնպես պետք է արմատապես վերացնել անցյալի թերություններն ու բացերը, յերբ եքսպեդիցիան ուշ եր գնում, լագերի կառուցումը կատարվում եր անպլան, լագեր եյին բարձրանում կառուցումները դեռ չավարտած և այլն:

Նախ և առաջ անհրաժեշտ է կազմել լագերի նախագիծը հատուկ հանձնաժողովի (Ֆ. կ. կազմակերպության, նախագծային որգաններ, Առժողկոմատի և համապատասխան շահագրգռված որգանների ներկայացուցիչների) միջոցով, ապա սկսել կառուցման աշխատանքները:

Եքսպեդիցիան առնվազն լագեր դուրս գալուց 15–20 որ առաջ պետք է սկսի իր աշխատանքները և ամբողջ կառուցումներն ավարտելուց հետո միայն պետք է դուրս գա լագեր:

Լագերի կառուցման աշխատանքների համար մեկնող եքսպեդիցիայի հիմնական խնդիրներն են լինելու՝

1—Կառուցել ու պատրաստել խոհանոցը, մթերքի ու ինվենտարի պահեստները:

2—Պատրաստել աղբյուրներն ու առուներն այն հաշվով, որ թե աղբյուրի ջուրը և թե անձրևից գոյացած ջուրը, խորը և մաքուր տալով դուրս գա լագերից, առանց հավաքվելու ու փոքրիկ ճահճուտներ գոյացնելու:

3—Չորացնել ճահճուտ տեղերը և արմատապես վերացնել ճահիճներ առաջացնող պատճառները:

4—Խփել ամբողջ վրանները· վրանների շուրջը պատրաստել առուներ:

5—Կառուցել արտաքնոցներ՝ լագերի սահմաններից դուրս:

6—Կառուցել լողարաններ, արևային

վանններ ընդունելու համապատասխան տեղեր ու պայմաններ:

7—Պատրաստել ճաշարաններ, թեյարաններ:

8—Կառուցել գրադարան-ընթերցարան, բուժարան և ճագարանոց:

9—Պատրաստել մարզադաշտը, խաղերի առանձին դաշտեր:

10—Կառուցել ռադիոյի ու կինոյի համար հատուկ տեղեր:

11—Կառուցել լուսանկարչական լաբորատորիա:

12—Պատրաստել պահակակետերը, լագերի կենտրոնական շտաբն ու հրաձգարանը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԼԱԳԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բացի յերեխաների առողջության ամրապնդմանը ձգտելուց, պիոներական լագերի դլխավոր նպատակներից մեկն էլ կոմունիստական դաստիարակության խնդիրն է—յերեխաներին կոլեկտիվ կյանքին, աշխատանքին վարժեցնելը, հասարակական, քաղաքական աշխատանքներին լագեր բարձրացած պիոներներին ներգրավելը: Ահա այս պատասխանատու խնդիրները հաջողությամբ լուծելու, լագերի աշխատանքի վորակը մաքսիմալ չափով բարձրացնելու համար, անհրաժեշտ է նախորոք կազմել լագերի աշխատանքի բովանդակությունը:

Մենք այստեղ տալիս ենք պիոներական լագերի աշխատանքի բովանդակության հիմնական խնդիրները կոնկրետ ձևով. մենք պտնում ենք, վոր բովանդակության այդ խնդիրները պետք է քննության առնել բոլոր կոլեկտիվներում ու ոդակներում, թող յուրաքանչյուր աշխատող, յուրաքանչյուր պիոներ առաջադրի իր խնդիրները. ապա ավելի մանրացնել այն, վորպես գործունեության ծրագիր:

Պիոներական լագերի աշխատանքի բովանդակության հիմնական խնդիրները հետևյալն են.

1—առողջապահական ու ֆիզկուլտ աշխատանքներ.

2—կուլտ-մասսայական դաստիարակչական աշխատանքներ.

3—կոլեկտիվների մասնակցությունը հասարակական, քաղաքական կյանքին—հանրոդուտ աշխատանքներին (կուլտ-դաստիարակչական շաղկապ).

4— յերեխաների ռազմա – քաղաքական դաստիարակություն:

ա) Առողջապահական ու ֆիզկուլտ աշխատանքները լագերում

Պիոներական լագերի գլխավոր նպատակը լինելով յերեխաների առողջության ամրապնդումը՝ լագերի աշխատանքի բովանդակության հիմքը պետք է կազմի առողջապահական աշխատանքը:

Լագերում պիոներական յուրաքանչյուր կոլեկտիվ իր պրակտիկ գործունեությունը պետք է այնպես կազմակերպի, վորը ձգտի յերեխաների առողջությունն ամրացնելուն և որգանիզմը կազդուրելուն:

Ամեն լագերի յուրաքանչյուր պիոներ կոլեկտիվ, ողակի պայքարի ու աշխատանքի

հիմնական ողակը, վորին պետք է կառչեն բոլոր լագերականները:

Լագերում առողջապահական աշխատանքներն իրենց անհրաժեշտ բարձրության վրա դնելու համար, նախ և առաջ լագերը պետք է անպայման ունենա յուրաքանչյուր 300 պիոների համար՝ մեկ բժիշկ, մեկ բուժակ, բուժակայան և անհրաժեշտ քանակությամբ դեղորայք:

Լագերում բժշկի դերը չափազանց պատասխանատու և խոշոր է: Հիմնականում բժշկի դերը կայանում է հետևյալում՝

ա) ակտիվ կերպով մասնակցել որվա ռեժիմ կազմելուն և հսկել նրա ճիշտ կենսագործմանը.

բ) կազմակերպել առողջապահական սանիտարական կարգ ու կանոնի մասին զրույցներ, մոբիլիզացիայի յենթարկել պատանեկական մասսաներին՝ լագերի սանիտարական դրությունը բարելավելու համար.

գ. հսկել ճաշի, մթերքի, խոհանոցի մաքրությանը, ճաշի վորակին և լագերի ու վրանների սանիտարական վիճակին.

դ. ժամանակին բժշկական ողնություն ցույց տալ հիվանդություն ստացած յերեխաներին.

ե. կազմակերպել առաջին ողնության խմբակներ, ընդգրկելով յերեխաների լայն մասսաներին՝ ուսումնասիրելու սանիտարա-

կան դիտելիքները, դժբախտ դեպքերում յերեխաների ողնությունը կազմակերպելու համար.

զ. սիստեմատիկորեն բժշկական քննության յենթարկել յերեխաներին, պարզել լագերի կլիմայի և ընդհանրապես լագերի ազդեցությունը յերեխաների առողջության վիճակի վրա: Հսկել վարակիչ կամ այլ վտանգավոր հիվանդություն ունեցող յերեխաներին՝ այդպիսիներին հայտաբերելու և լագերից տեղափոխելու համար:

Հիմնականում սրանք են բժշկի դերը լագերում:

Սակայն առողջապահական աշխատանքներով միայն բժիշկը չե վար պետք է զբաղվի, այլ բժշկի ղեկավարությամբ վողջ լագերականներին պետք է ներգրավել առողջապահության համար մղվող պայքարում, միայն այդ կերպ հնարավոր կլինի առողջապահական աշխատանքն իրենց անհրաժեշտ բարձրության վրա դնել:

Լագերում առողջապահական աշխատանքները հիմնականում պետք է լինեն.

ա. ճիշտ կազմել ու կիրառել որվա ռեժիմը.—Ցուրաքանչյուր լագեր պետք է ունենա իր որվա ռեժիմը: Որվա ռեժիմը կոլեկտիվների, պիոներների ամբողջ որվա աշխատանքի, զբաղմունքի, հանգստի ու զվարճալիքի դասավորումն է ըստ ժամերի, վորը պետք է մշակել դիտականորեն՝ մանկավարժների, մանկաբանների, բժիշկների խորհուրդներով ու ղեկավարությամբ: Ռեժիմի ճիշտ կազմելուց ու կիրառելուց շատ բան է կախված: Այդ տեսակետիցել չափազանց խիստ հսկողություն պետք է սահմանել որվա ռեժիմը ճշտիվ կիրառելու համար.

բ. լագերի ընդհանուր սանիտարական վիճակը.—Առավելագույն ուշադրություն պետք է հատկացնել լագերի հրապարակների, վրանների տարածության, շրջակայքի մաքրության գործին: Լագերի սահմանները չորս կողմից պետք է մաքրել և կառուցել շարժական արտաքնոցներ՝ լագերի սահմաններից առնվազն 500 քայլ հեռավորության վրա: Խստիվ արգելել լագերի շրջակայքը կեղտոտելը, աղբ ու կերակրի մնացորդը թափելը: Եթե լագերում աղբյուրներ կան ու նրանցից առուներ են սկիզբ առնում, ապա խնամքով պետք է պատրաստել այդ առուները, մաքրել, թույլ չտալով ճահճուտներ ու ցեխ գոյանալ, վորը վտանգավոր է առողջապահության տեսակետից:

3). վրանները մաքուր պահել.—Անցյալներում վրանների պակասը ստիպում էր մեկ վրանի տակ 8–10 պիոներների փոխարեն տեղավորել 15–20 պիոներ, ստեղծելով սանիտարական աննորմալ պայմաններ: Այս տարի այդ

խոշոր բացն արմատապես պետք է վերացնել։ Նորմայից ավելի վոչ մի յերեխա չպետք է տեղավորել վրանում։ Վրաններում թախտերը պետք է տեղավորել միմյանցից հեռու, ցերեկներն ամբողջովին վրանները պետք է բաց պահել, իսկ տեղաշորը դուրս դցել։

Արդելել յերեխաներին ցերեկները վրաններում հավաքվելը, բացառությամբ ցուրտ, ամպոտ, անձրևոտ յեղանակների։ Յերեխաներն ամբողջ որը պետք է լինեն բնության մեջ, ազատ ոդում, անտառում։

4. առաջին ոգնության խմբակները լագերում.—Լագերում լայնորեն պետք է ծավալել առաջին ոգնության խմբակների կազմակերպման գործը։ Յուրաքանչյուր կոլեկտիվում, գնդում պետք է ունենալ առաջին ոգնության խմբակ պիոներական լայն մասսաներին ընդգրկել այդ խմբակներում, տալով նրանց առաջին ոգնության անհրաժեշտ գիտելիքներ

5. մաքուր և վորակով ճաշ տալ յերեխաներին.—Մաքուր, վորակով պատրաստված ճաշի նշանակությունը յերեխաների առողջության ամրացման գործում ակներևև։ Կոլեկտիվ հսկողություն պետք է սահմանել ճաշի, մթերքի, մաքրության ու վորակի բարձրացման գործին, ճաշը միշտ նշված ժամին պետք է պատրաստվի ու տրվի։

6. Սանիտարական խմբակները լագերում.—Անկասկած. այս պատասխանատու ու

դժվարին խնդիրները յերբեք չի կարող բժիշկը մենակ կատարել, յեթե նրան ոգնության չդան լագերի լողջ կոլեկտիվները ու ոդակները։ Առողջապահական աշխատանքները լագերում կանոնավոր հունի մեջ դնելու համար յուրաքանչյուր կոլեկտիվ ու գունդ պետք է ունենա պիոներներից կազմակերպված սանիտարական խմբակներ, բրիգադներ, այդ խմբակներն ու բրիգադները բժշկի հետ միասին և նրա ղեկավարությամբ պետք է ձեռնամուխ լինեն մատնանշված խնդիրները հաջողությամբ կատարելուն։

Ֆիզկուլտուրա

Ֆիզկուլտուրան հանդիսանում է յերեխաների առողջության ամրացման, ֆիզիկապես կաղդուրելու զորեղ խթան։ Ֆիզկուլտուրան պիոներական լագերի աշխատանքի բովանդակության մեջ պետք է բռնի ղլխավոր տեղերից մեկը և պետք է արժանանա ամենալուրջ ուշադրության։ Առանց յերեխաների մեջ ամենորյա ֆիզկուլտուրայի, «առողջ, ամուր, յերկաթյա մկաններով» սերունդ պատկերացնել չի կարելի։ Լագերում ֆիզկուլտ աշխատանքներն անհրաժեշտ բարձրության վրա դնելու համար նախ և առաջ լագերը պետք է ապահովել վորակյալ ֆիզկուլտ աշխատողներով։ առնվազն 150—յերեխայի համար անհրաժեշտ է մեկ ֆիզկուլտ աշխատող։

Պիոներական լագերում ֆիզկուլտ աշխատանքները կայանում են հետևյալում.

ա. ամենորյա լիցքային մարզանքներ.

բ. պիոներական–բացոթյա մասսայական խաղեր.

գ. թեթև ատլետիկա–նետումներ, վազքեր, թռիչքներ.

դ. ոդի, ջրի և արևի սիստեմատիկ ողտագործում.

ե. սպորտ խաղեր–վալեյբոլ, բասկետբոլ, դարաղկի, կապիտանբոլ և այլն.

զ. ֆիզկուլտ բնույթ կրող զբոսանքների, եքսկուրսիաների կազմակերպումը:

Լագերի ֆիզկուլտ աշխատանքների առանցքային խնդիրները սրանք են:

Ընդունած համկոմկուսի ԿԿ–ը ապրիլ 21–ի վորոշումով հատուկ սրությամբ դրեց յերեխաների մեջ ֆիզկուլտ աշխատանքների բարելավման խնդիրը, այնուամենայնիվ այդ աշխատանքները պիոներական կոլեկտիվներում շատ անբավարար են, այդ հետևանք է այն բանի, վոր մեր աշխատողներից շատերը թերագնատում են ֆիզկուլտուրան, այդ տրամադրությունները պետք է ջախջախել, վճռաբար բարելավելով հարատև, սիստեմի վերածած ֆիզկուլտ աշխատանքները կոլեկտիվներում:

Ոդը, ջուրն ու արևը բնական այն զորեղ ֆակտորներն են, վորոնց կանոնավոր, գիտականորեն ողտագործումը վճռական նշանակություն ունի պիոներների առողջացման գործում: Ցելնելով նրա հսկայական դերից, ոդի, ջրի և արևի սիստեմատիկ ու գիտականորեն ողտագործումը պետք է լինի լագերում տարվող առողջապահական ու ֆիզկուլտ աշխատանքների կարևորագույն մասը:

Ոդից, ջրից ու արևից ողտվելը պետք է լինի բժշկի ու ֆիզկուլտ աշխատողների անմիջական ցուցմունքներով: Բնական այդ ֆակտորներից ողտվելու համար պետք է ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ արևի վաննաներ ընդունելու հատուկ տեղեր, լողարաններ, մի բան, վոր անցյալներում բացակայել է մի շարք լագերներից:

Լագերի ամենահիմնական նախապայմանը ջուրն է. դրա համար լագերը պետք է հիմնել գետերի ու լճերի մոտ: Յեթե լողանալու համար գետեր ու լճեր չկան, ապա անհրաժեշտ է յեղած աղբյուրների ջուրն ողտագործել՝ փոքրիկ լողարաններ պատրաստելով: Յուրաքանչյուր լագեր անպայման պետք է ունենա լողարան և արևային վաննա ընդունելու կանոնավոր հարմարություններ:

բ) Կուլտուր-մասսայական, դաստիարակչական աշխատանքը լագերում

Դաստիարակչական աշխատանքը լագերում

Պիոներական լագերը յերեխաների համար միայն առողջության ամրացման ու հանգստի վայր չէ, այլ աճող սերնդի կոմունիստական-ինտերնացիոնալիստական դաստիարակության, կոլեկտիվ կյանքին ու աշխատանքին վարժեցնելու դարբնոց է:

Համկոմկուսի Կենտկոմը պիոներ շարժման մասին կայացրած վորոշման մեջ հատուկ սրությամբ առաջադրեց պիոներ կազմակերպության մեջ դաստիարակչական աշխատանքները վճռաբար ուժեղացնելու խնդիրը. այս տեսակետից ել լագերի աշխատանքի բովանդակության գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի դաստիարակչական աշխատանքների խորացումը:

Համկոմկուսի 17-րդ կոնֆերենցիայի այն ցուցմունքը, վոր՝ 2-րդ հնգամյակում «...յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությանը վերածել անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ շինարարների»—իր ամբողջ հասակով առավել ևս մեծ սրությամբ է դրվում մեր առաջ՝ մանկական մասսաների կոմունիստական դաստիարակության, սոցիալիստական շինարարության համար նրանց ակտիվ ու գիտակից, կոմունիստորեն դաստիարակված շինարարներ պատրաստելու համար—այն սերնդին, վորին վիճակված է սոցիալիզմի-կոմունիզմի կառուցման վերջնական ավարտումը:

Լագերի աշխատանքների այս ֆրոնտը պետք է արժանանա բացառիկ ուշադրության ու յեռանդուն աշխատանքի:

Յուրաքանչյուր պիոներ աշխատող, կոմյերիտական, վորին վիճակված է չափազանց պատասխանատու ու դժվարին այս խնդիրը—պիոներական կոլեկտիվ ղեկավարելու, աճող սերնդին կոմունիստական դաստիարակություն տալու, պետք է լավ հասկանա ու ըմբռնի, թե ի՞նչ է նշանակում յերեխաներին կոմունիստական դաստիարակություն տալ: Այդ նշանակում է՝ կոլեկտիվում դաստիարակչական աշխատանքները կազմակերպել այնպես, վոր յուրաքանչյուր պիոներ և՛ ուսման ֆրոնտում, և՛ իր բոլոր աշխատանքներում լինի հարվածային, վոր նա որինակ հանդիսանա բոլոր յերեխաներին, վոր նա գիտակցական վերաբերմունք ունենա դեպի հանրային գույքը և, վերջապես, պիոները հասկանա կուսակցության ու կառավարության քաղաքականությունը ներկա ետապում, սոցիալիստական շինարարության խնդիրները, կարողանա ըմբռնել մեր վերելքի ու անման դժվարությունները ու նրանց հաղթահարման միջոցները, կարողանան հաշվի

ստեղծել մեր յերկրում տեղի ունեցող սոցիալ—տնտեսական տեղաշարժերը, հասկանալ ներկա ետապում դասակարգային թշնամու պայքարի ձևերը, կարողանա կողմնորոշվել դասակարգային պայքարում և ակտիվ կերպով պայքարել դասակարգային թշնամու դեմ: Ահա թե ինչ է նշանակում կոմունիստական դաստիարակություն տալ պիոներին:

Ցեղնելով աճող սերնդի դաստիարակության վերոհիշյալ հիմնական նպատակներից, պիոներական լագերում դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է լինեն հետևյալը.

Կազմակերպել քաղաքական ինֆորմացիաներ.

ա) առաջին հնգամյակի արդյունքների, յերկրորդ հնգամյակի հեռանկարների, համկոմկուսի կենտկոմի ու ԿՎՀ-ի հունվարյան պլենումի վորոշումների, ընկ. Ստալինի ճառի՝ գյուղի աշխատանքների մասին և այլն.

բ) կուսակցության ու Լենինյան կոմյերիտմիության հերոսական պատմության, Ֆ. Միության ու Ֆ. Հայաստանի պատանեկական կոմունիստական շարժման պայքարի ու աշխատանքի անցած ուղու մասին.

գ) Հոկտեմբերյան հեղափոխության քաղաքացիական կռիվների ու մայիսյան ապստամբության անցքերի շուրջ.

դ) յերեխաներին ծանոթացնել՝ միջազգային ներկա դրությանը, հեղափոխական շարժումների ծավալմանն արտասահմանում, հեղափոխական պրոլետարիատի մղած պայքարին—տիրող կարգերի դեմ, կապիտալիստական յերկրներում տնտեսական ճգնաժամին ու նրա թողած ծանր հետևանքներին՝ հեղափոխական մասսաների վիճակի վրա, արտասահմանի մանկական կոմունիստական կազմակերպությունների կյանքին ու գործունեությանը:

ե) յերեխաներին ծանոթացնել Հեռավոր Արևելքում տեղի ունեցող պատերազմներին, Ճապոնիայի ագրեսային՝ Չինաստանում և չինական խորհուրդներին.

զ. կուսակցության ու կառավարության հերթական վորոշումների, կուսակցության ու կոմյերիտմիության կողմից պիոներ կազմակերպության առաջ դրված խնդիրների մասին:

Ահա սրանք են մեր դաստիարակչական աշխատանքի առանցքային խնդիրներ. սակայն այստեղ եականն այն է, թե ինչպես պետք է կազմակերպել այս խնդիրների անցկացումը և ընդհանրապես դաստիարակչական աշխատանքը պիոներական կոլեկտիվում, ոջակում, խարույկի շուրջ:

Դաստիարակչական աշխատանքները կազ-

մակերպելիս պետք է կիրառել ընկ. Կոսարեվի այն ցուցմունքը, թե՝ «պիոներների դասակարգային վոգով հարկավոր է տանել մանուկների ինքնագործունեության, նրանց շահերի հիման վրա: Միանգամայն յուրահատուկ ձևով պետք է լինի պիոներական կազմակերպության մեջ տարվող քաղ-դաստիարակչական աշխատանքները»:

Չի կարելի քաղաքական ինֆորմացիաները պիոներական կոլեկտիվում կազմակերպել այն ձևով, այն մեթոդով, ինչպես կոմյերիտական բջիջում կամ հասակավորների մոտ: Այստեղ պետք է հաշվանալ մանկական աշխատանքի առանձնահատկությունները, յերեխաների պահանջներն ու հետաքրքրությունը:

Քաղդաստիարակչական աշխատանքը պիոներական կոլեկտիվում պետք է կազմակերպել մի շարք մեթոդներով ու ձևերով: Այդ ձևերն ու մեթոդներն են՝ զրույցները, պատմվածքները, ընթերցանությունը, քաղ-վիճակախաղերը, քաղմարտերը և մի շարք այլ մեթոդներ, վորոնք յերեխաների հետաքրքրությունը չարժեն դեպի անցկացվող նյութը:

Պիոներական կոլեկտիվի, ողակի ու խումբի շուրջ կազմակերպվող աշխատանքների ղեկավարությունը վճռաբար պետք է բարձրացնել:

Վոչ մի հավաքույթ, վոչ մի զրույց, վոչ մի պարապմունք չպետք է անցկացնել առանց

խաղերի, յերգերի, արտասանությունների, սրախոսությունների, կենդանի ու գունեղ ձևերի, այսպիսով իսկ զարթեցնել ու զարգացնել յերեխաների ինքնագործունեությունն ու ստեղծագործությունը:

Գրադարանների ու ընթերցարանների կազմակերպումը լագերում.—Անկասկած՝ յերեխաների մեջ դաստիարակչական աշխատանքների խորացման, մանկական մասսաների կոմունիստական դաստիարակության գործում վճռական դեր է վիճակված մանկական գեղարվեստական քաղաքական գրականությանը:

Յուրքանչյուր լագեր անպայման պետք է ունենա իր գրադարանն ու ընթերցարանը, գրքադարաններն ապահովելով մանկական գեղարվեստական, քաղաքական թարմ գրականությամբ ու թերթերով:

ԿՈՒԼՏՈՒՐ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ, ՀԱՆԳՍՏԻ ՈՒ ԶՎԱՐՃԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ապրիլի 21-ի վորոշման մեջ, Համկոմկուսի Կենտկոմը նշեց, վոր առավելագույն ուշադրություն պետք է հատկացնել յերեխաների հանգստի ու զվարճալիքի կազմակերպման գործին: Կուսակցության շտաբի մարտական դիրեկտիվի կենսագործման հիման վրա, հատկապես լագերում լուրջ ուշադրություն պետք է դարձնել յերեխաների հանգստի ու զվարճալիքի կազմակերպման գործին: Այս ֆրոն-

տում անցյալի թերությունները, թերևս սը-
խալը կայանում է նրանում, վոր որվա ռեժի-
մում չափազանց քիչ տեղ է հատկացվում պի-
ոներների հանգստի ու զվարճալիքի կազմա-
կերպմանը. մինչդեռ լագերի աշխատանքի բո-
վանդակության մեջ վճռական տեղ պետք է
գրավի հանգստի ու զվարճալիքի կազմակեր-
պումը, վորովհետև յերեխաների հանգիստն
ու զվարճալիքը խելոք ձևով կազմակերպել՝
նշանակում է նպաստել նրանց առողջության
ամրացմանը, նշանակում է բավարարել պա-
տանիների ամենախոշոր պահանջներից մեկը:
Յերգելը, խաղալը, պարելը պատանու անբա-
ժան ընկերն են. առանց այդ նա տխուր է.
այս բանը լավ պետք է հասկանա յուրաքանչ-
յուր ղեկավար, վորին հանձնարարված է պի-
ոներների դաստիարակությունը:

Պիոներների հանգստի ու զվարճալիքի կազ-
մակերպումն, անխզելիորեն պետք է շարա-
հյուսվի կոլեկտիվի, ողակի վողջ պրակտիկ
գործունեության հետ: Առանց պարերի, խա-
ղերի, յերգերի, պիոներական աշխատանքների
հավաքույթ ու զրույց չպետք է լինի պրակ-
տիկայում:

ա—Լագերի որվա ռեժիմը մշակելիս ա-
ռավելագույն չափով ժամանակ պետք է
հատկացնել յերեխաների կուլտուրական աշ-
խատանքներին, հանգստին ու զվարճալիքին:

բ—Կազմակերպել ռադիո-հաղորդումներ:

Կիառել Ծաղկաձորի պիոներական լագերի
անցյալ տարվա փորձը: Այդ լագերում կազ-
մակերպված եր ռադիո-հաղորդման կայան,
ոգտագործվում եյին լագերի նվագախումբը,
յերգեցիկ խմբերը՝ յերաժիշտ պիոներնե-
րին ռադիո-համերգներ տալու համար: Այս
գործը մեծ հաջողություն ունեցավ Ծաղկաձո-
րի լագերում:

գ—Կազմակերպել սիստեմատիկորեն կի-
նո-ցուցադրումներ, հատկապես մանկական
նկարներ:

դ—Կոլեկտիվային, զնդային ու լագերա-
յին մասշտաբով սիստեմատիկորեն կազմա-
կերպել բացոթյա ցերեկույթներ, կենդանի
լրագրեր, յերաժշտություն, արտասանու-
թյուններ, մարզահանդեսներ, պարեր և այլն:

ե—Ոգտագործել յեղած նվագախումբը,
յերաժշտական գործիքներ ունեցող պիոներնե-
րից կազմակերպված խմբակները՝ լագերում
յերաժշտական գործը կանոնավոր հիմքերի
վրա դնելու համար:

զ—Կազմակերպել մասսայական շարժեր,
խաղեր՝ «Սպիտակներն ու Կարմիրները»,
«Քաղաքացիական կռիվներ», «Զինաստանի
խորհուրդներ», «Միջազգային պատանեկական
շաբաթ» և այլն:

է— Խարույկի շուրջը պետք է կազմա-
կերպել՝ պարեր, յերգեր, արտասանություն-

ներ, եպիզոդներ, սրախոսություններ, կատակաբանություն դիմակախաղեր և այլն:



Իրերն այսպես դասավորել պայուսակի վրա

ը—կազմակերպել եքիպաժներ, զբոսանքներ դեպի բնության ծոցը:

Դրոշակախոսություն (Մորզե)

Հիմնականում սրանք են յերեխաների հանգստի ու զվարճալիքի կազմակերպման խնդիրները լագերում:

Ինտերնացիոնալ դաստիարակություն

Յերեխաների ինտերնացիոնալ դաստիարակությունն աճող սերնդի կոմունիստական դաստիարակության անբաժան մասն է կազմում: Ինտերնացիոնալ դաստիարակությունը պիոներական աշխատանքի սիստեմում պետք է բռնի իր կարևորագույն տեղը:

Դասակարգային թշնամին, վոր պայքար է տանում պատանիներին իր ազդեցության տակ առնելու համար, առաջին հերթին աշխատում է ազգային ատելություն, ազգայնական տրամադրություններ առաջացնել յերեխաների մեջ· ահա թե ինչու ինտերնացիոնալ դաստիարակությունը յերեխաների մեջ խոշոր նշանակություն ունի:

Պիոներական լագերում, վորտեղ հավաքվում են՝ հայերի, թուրքերի, ռուսների և այլ ազգի պատանիներ, կազմելով պատանիների ինտերնացիոնալ ընտանիք, վճռականորեն պետք է բարձրացնել ինտերնացիոնալ դաստիարակության վորակը:

Դաղափարական ուժեղ պայքար պետք է ծավալել ազգային հարցում գլխավոր վտանգ՝ մեծապետական շովինիզմի և տեղական նա-

ցիոնալիզմի ազդեցությունների ու տրամադրությունների դեմ՝ յերեխաների շրջանում:

Կազմակերպել մատչելի զրույցներ մեր կուսակցության ու Խ. Իշխանության ազգային քաղաքականության մասին: Ազգային հանրապետությունների ձեռք բերած հսկայական նվաճումները սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում հետևանք են կուսակցության ու Իշխանության լենինյան ազգային ճիշտ քաղաքականության:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բոլոր ազգի յերեխաների միացյալ, կոլեկտիվ կյանքն ու աշխատանքը ամրապնդելու համար: Ազգային փոքրամասնության յերեխաներին պետք է վճռականորեն առաջ քաշել պիոներ կոլեկտիվի գործունեության մեջ, առավելագույն չափով զարգացնել նրանց նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը:

Կենդանի ու դրավոր կապ հաստատել հարևան ազգային հանրապետությունների ու Ռուսաստանի պիոներական լագերների հետ, կատարելով փորձերի փոխանակություն և փոխադարձաբար պիոներներ ուղարկել միմիանց լագերները:

Կազմակերպել զրույցներ արտասահմանի ու Սովետային Միության մյուս հանրապետությունների, պիոներ կազմակերպությունների կյանքի, պայքարի ու աշխատանքի մասին:

Լագերի պիոներական կոլեկտիվները պետք է վերցնեն մոտակա ազգային փոքրամասնական գյուղերի չեֆությունը, կազմակերպելով բրիգադներ դեպի գյուղ, ողնեն գյուղի պիոներ կոլեկտիվին, գյուղում կազմակերպեն կուլտուր մասսայական աշխատանքներ:

Կազմակերպել արտասահմանի հեղափոխական պրոլետարիատի՝ բանտերում տառապող մեր յեղբայրների՝ ողնության գործը:

Հակակրոնական աշխատանքը լագերում

Հակակրոնական պայքարը, յերեխաների հակակրոնական դաստիարակությունը պիոներական աշխատանքների սիստեմում իր վճռական տեղն ունի:

Համ ԼԿՅԵՄ-ի 9-րդ համագումարը պիոներական կազմակերպության մեջ տարվող աշխատանքների խնդիրը քննարկելիս՝ հատուկ սրությամբ նշեց յերեխաների հակակրոնական դաստիարակության ուժեղացման հարցը: Այդ համագումարում ընկեր Ջավախիձեն ասում էր՝ «Վոչ մի կազմակերպություն չի կարող տանել պրակտիկ այն աշխատանքը, վորը կարող է կատարել պիոներ կազմակերպությունը կրոնական նախապաշարումների ջախջախման գործում, վորովհետև նա ամենամասսայական կազմակերպությունն է և իր շարքերում ունի աղջիկների մեծ տոկոս»:

Այս տեսակետից էլ պիոներական կազմակերպության վրա խոշոր պարտականություն է դրված՝ յերեխաների հակակրոնական դաստիարակության վորակը բարձրացնելու, հակակրոնական պրոպագանդը քաղաքում, գյուղում, ընտանիքում ուժեղացնելու համար:

Հակակրոնական աշխատանքը պիոներական կոլեկտիվի աշխատանքների սիստեմում պետք է լինի սիստեմատիկ, հարատև, դրա համար պետք է վճռական պայքար հայտարարել՝ հակակրոնական պայքարը կամպանիայի, տոնից-տոն վերածելու պրակտիկայի ու վորձերի դեմ:

Պիոներական լագերն իր պայմաններով ու հնարավորություններով խոշոր նշանակություն ունի յերեխաների հակակրոնական դաստիարակության համար:

Բոլորին պարզ է, վոր կրոնականներն աստծո գոյությունը, բնության վրա աստծո տիրակալությունն ապացուցելու համար ոգտագործում են բնական յերեվույթները, մթնոլորտային տեղումներ և այլն· իսկ, լագերը գտնվում է բնության ծոցում, վորտեղ տեղի յեն ունենում բնական բոլոր յերեվույթներն ու մթնոլորտային տեղումները: Այստեղ արդեն առանձնահատուկ նշանակություն է ստանում գիտական աշխատանքը, բնական յերեվույթների գիտականորեն հիմնավորված վերլուծումը:

Լագերում պետք է սիստեմատիկորեն կազմակերպել գիտական զրույցներ, բնական յերևույթների շուրջը գիտականորեն, պրակտիկ կերպով ապացուցել բնական յերեվույթների պատճառները, այդպիսով ջախջախել կրոնական առասպելները՝ աստծո գոյության մասին:

Բնական ամեն մի յերեվույթի գիտական բացատրությունը, գործնականում այդ յերեվույթի ցույց տալը խոշոր նշանակություն կունենան յերեխաների հակակրոնական դաստիարակության, մատերալիստական աշխարհայացքի լայնացման գործում:

Ուժեղ դաստիարակչական աշխատանք պետք է ծավալել՝ վերացնելու համար յերեխաների մեջ գոյություն ունեցող կրոնական տրամադրությունները, հին կենցաղի, սովորությունների մնացորդները, վորոնք հաճախ ընտանիքից են թափանցում մանկական միջավայրը:

Լագերի գրադարանները պետք է ապահովել հակակրոնական գրականությամբ, լրագրերով, ժուրնալներով և կանոնավոր հիմքերի վրա դնել նրանց ոգտագործումը:

Կրոնական այդ տոների դեմ պետք է լայն հակակրոնական աշխատանք ծավալել ինչպես լագերում այնպես էլ հարեվան գյուղերում:

Ամեն մի պիոների պետք է դաստիարակել այնպես, վոր նա լինի անաստված և վոչ միայն

անաստված, այլև գաղափարականապես զինված ակտիվ մարտիկ՝ հին կենցաղի մնացորդների, կրոնական նախապաշարումների դեմ մղվող պայքարում ինչպես կոլեկտիվում, այնպես էլ ընտանիքում, փողոցում, դպրոցում, գյուղում ու քաղաքում:

Տուրիստական աշխատանքը լագերում

Պիոներական լագերն իր հնարավորություններով խոշոր նշանակություն ունի տուրիստական աշխատանքները պիոներական կոլեկտիվներում զարգացնելու համար:

Լագերում անհրաժեշտ ուշադրության պետք է արժանանան տուրիստական աշխատանքները և այս ֆրոնտում կոլեկտիվները գործնական աշխատանք պետք է ծավալեն: Անհրաժեշտ է դաստիարակչական, բացատրական աշխատանք կազմակերպել պիոներ կոլեկտիվներում տուրիզմի նշանակության ու նրա դերի մասին, ապա ձեռնարկել գործնական աշխատանքի: Կազմակերպել տուրիստական արշավներ՝ դեպի անտառները, լեռները, դաշտերը գետերն ու հովիտները, ուսումնասիրել բնությունը, լեռների յերկրաբանական կազմությունը, հավաքել հանքային նյութերի, բույսերի, թռչունների, միջատների տեսակներ, կազմել կոլեկցիաներ: Ուսումնասիրել լագերի վայրի, նրա շրջակայքի աշխարհագրական դիրքը, տնտեսական հիմնական

ճյուղը, կազմել նրա քարտեզը և այլն, տուրիստական արշավների միջոցով ծանոթանալ շրջակա գյուղերին, կոլտնտեսություններին, խորհտնտեսությունների և այլն:

—

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆՐՈԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԼԱԳԵՐՈՒՄ

Հասարակական հանրոգուտ աշխատանքը լագերի աշխատանքի բովանդակության գլխավոր տարրերից մեկն է: Այս տարի լագերում հասարակական հանրոգուտ աշխատանքի բովանդակության բնույթն արմատապես պետք է վերակառուցել:

Հայտնի յե բոլորին, վոր դեռ անցյալ տարի լուսժողկոմատը յերեխաների հանգստի ու որվա ռեժիմի մասին կայացրած վորոշումով խստիվ արգելեց յերեխաների ուժերից վեր սիստեմատիկ, ծանր ֆիզիկական աշխատանքները (շաբաթորյակներն ու բուքսիրները դաշտերում, գործարաններում, հանքերում, յերկաթուղում և այլն): Լուսժողկոմատը, ինչպես նաև կոմյերիմիության կենտկոմն իրենց վորոշումներով պարտադրեցին բոլոր կազմակերպություններին առավելագույն ուշադրություն դարձնել յերեխաների հանգստի, զվարճալիքի կազմակերպման, որվա ռեժիմի կիրառման վրա: Այս վորոշումների կենսագործման հիման

վրա յե, վոր պիոներական կոլեկտիվների հասարակական հանրոգուտ աշխատանքի բովանդակությունը պետք է վերակառուցել և առավելագույն չափով կրճատել յերեխաների ուժերից վեր ծանր ֆիզիկական աշխատանքները, կոլխոզում, դաշտում, գործարանում: Այս խնդիրն ավելի մեծ սրությամբ է դրվում լագերում, վորովհետև լագերը յերեխաների առողջության ամրացման նպատակն է հետապընդում:

Անցյալում աշխատանքի այս բնագավառում հսկայական խեղաթյուրումներ են յեղել. սիստեմատիկ մասսայական շարաթորյակներ են կազմակերպվել դեպի դաշտ, կատարելով յերկար ժամերով ֆիզիկական աշխատանք, վորն ազդել է յերեխաների առողջության վիճակի վրա: Սակայն այս դրությունը յերբեք չի ասում կտրվել հասարակական-քաղաքական կյանքից, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների աշխատանքներից, ինչպես մտածում են շատերը: Այդպես մտածել, այդպես գործել նշանակում է մեծ սխալ կատարել յերեխաների կոմունիստական դաստիարակության գործում:

Աճող սերնդի կոմունիստական դաստիարակությունը հենց այդ հասարակական-քաղաքական աշխատանքների մեջն է: Յերեխաների լայն մասսաներին հասարակական-քաղաքական աշխատանքներին մասնակից դարձնելով,

պիոներական կոլեկտիվի պրակտիկ գործունեությունը սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ կապելով միայն հնարավոր է աճող սերնդի կոմունիստական դաստիրականության, նրանց սոցիալիստական շինարարության համար ակտիվ ու գիտակից շինարարներ պատրաստելու համար: Ահա թե ինչու հասարակական հանրոգուտ աշխատանքը պիոներական լագերի աշխատանքի բովանդակության գլխավոր խնդիրներից մեկն է:

Միայն խնդիրը նրանումն է, վոր ճիշտ կազմակերպվի հասարարկական հանրոգուտ աշխատանքը, վոր այդ աշխատանքը յենթարկված լինի յերեխաների առողջապահության ամրացման խնդիրներին, լայնացնի յերեխաների հարսարակական-քաղաքական շրջահայացքը:

Պիոներական լագերի հասարակական հանրոգուտ աշխատանքները հիմնակնում կայանում են հետեվյալում:

Ա. Ուսումնասիրել կոլտնտեսությունը, խորհտնտեսությունը, ՄՏԿայանը, գործարանը.—Կոլտնտեսական յերեխաներից շատ-շատերը գործարան չեն տեսել, չգիտեն նրանց աշխատանքի պրոցեսը, աշխատանքի կազմակերպումը գործարանում, աշխատանքը խորհտնտեսությունում, նույնիսկ ՄՏԿ.—ներում: Իսկ քաղաքի, բանվորների յերեխաներից շատերը չեն տեսել, չգիտեն ինչպես է կազմա-

կերպված աշխատանքը կոլտնտեսությունում, խորհտնտեսությունում, ՄՏԿ-ներում։ Նրանք միայն գրքերումն են կարդացել, իրենց դասերի ընթացքում սովորել, սակայն պրակտիկայում, քիչ են տեսել։ Այս տեսակետից էլ յերեխաների դաստիարակության գործում խոշոր նշանակություն ունի գործնականում տեսնել այն, ինչ կարդում են թերթում կամ գրքերում։ Լաղերում հաճախ պետք է կազմակերպել եքսկուրսիաներ դեպի մոտակա կոլտնտեսությունը, ՄՏԿայանը, խորհտնտեսությունը, գործարանը, էլեկտրոկայանը. ուսումնասիրել աշխատանքի պրոցեսը, աշխատանքի կազմակերպումը, արտադրական-ֆինանսական պլանների կատարումը և այլն։ Մանավանդ գյուղում նոր մուտք գործած գյուղատնտեսական բարդ մեքենաների ու գործիքների հետ, նրանց կառուցվածքին, աշխատանքի պրոցեսին և այլն։ Սակայն միայն ուսումնասիրելու չպետք է գնալ. այնտեղ պետք է վորոշ աշխատանք կազմակերպել։ Այդ աշխատանքը պետք է կայանա հետևյալում՝

1. Կազմակերպել զրույցներ, ընթերցանություններ՝ կուսակցության ու կառավարության կոլտնտեսությունների ամրացման, աշխատանքի կազմակերպման, բերքի պահպանման ու հավաքման վերաբերյալ հանած վորոշումների մասին։

ա. Կոլտնտեսականների, խորհտնտեսության, ՄՏԿ-ի բանվորների համար կազմակերպել զրույցներ, թե ինչպես է կազմակերպված աշխատանքը քաղաքի գործարաններում, թե ինչպես, քաղաքի բանվորները սոցմրցման ու հարվածայնության ծավալման հիման վրա կատարում ու գերակատարում են իրենց պլանները, ինչ մեթոդներով են պայքարում արդ-ֆինպլանների կատարման համար, այդպիսով քաղաքի գործարանների բանվորների պայքարի ու աշխատանքի փորձը տեղափոխել գյուղը՝ կոլտնտեսությունը, խորհտնտեսությունը, ՄՏԿ-ն և այլն։

2). Կուլտուր մասսայական աշխատանքների կազմակերպումը գյուղում.—Լաղերի պիոներական կոլեկտիվների վրա խոշոր պարտավորություն է ընկնում՝ գյուղում կուլտուր-մասսայական աշխատանքներ կազմակերպելու գործում։ Այս նպատակով անհրաժեշտ է՝ գյուղերում, կոլտնտեսություններում, խորտնտեսություններում, ՄՏԿ-ներում կազմակերպել՝ յերեկույթներ, ցերեկույթներ, կենդանի լրագրեր, մարզահանդեսներ, խաղեր, պարեր, յերաժշտություն, ընտանեկան յերեկոներ։ Կազմակերպել հակակրոնական, նոր կենցաղի խնդիրների շուրջ զրույցներ, հրատարակել պատի թերթ և այլն։

3) Ճագարաբուծության, թռչնաբուծության զարգացման համար.—Ընդունած լաղերի կարճ ժամանակամիջոցին, այնուամենայնիվ,

լադերում մեծ հնարավորություններ կան ճագարաբուծությամբ ու թռչնաբուծությամբ պարապելու։ Քիչ չեն այն կոլեկտիվները, որոնք ճագարներ ու թռչուններ են պահում։ Մենք խորհուրդ կտայինք այդ կոլեկտիվներին, որպեսզի լադեր բարձրանալիս–իրենց ճագարներն ու թռչուններն իրենց հետ լադեր տանեին։ Լադերում կառուցել փոքրիկ ճագարանոցներ ու թռչունների բներ։—որինակելի ձևով խնամել ճագարներին ու թռչուններին։ Այս ասպարիզում 1932 Ծաղկաձորի լադերը դրական փորձ ունեցավ։

4. Պայքար վնասատուների դեմ՝ բերքի պաշտպանության համար։—Լադերային շրջանը՝ բերքահավաքի նախապատրաստման, վնասատուների դեմ պայքարելու, բերքի պաշտպանության շրջանն է։ Այդ հանգամանքը խոշոր պարտականություն է դնում լադերի պիոներական կոլեկտիվների վրա բերքի պաշտպանության համար, վնասատուների դեմ պայքար կազմակերպելու գործում։

Նախ և առաջ լադերի պիոներական կոլեկտիվներն ուժեղ հսկողություն պետք է սահմանեն լադերի շրջակայքի ցանքսերը պաշտպանելու համար։ Թույլ չտալ ինչպես մարդկանց, այնպես էլ անասուններին ցանքսի մեջ մտնելու, ցանքսը փչացնելու։ Կազմակերպել մկնների, մորեխի և բերքի այլ վնասատուների դեմ ուժեղ պայքար։

Կազմակերպել պիոներական բրիգադներ և ուղարկել գյուղերը զրույցներ կազմակերպելու՝ բերքի պաշտպանության, վնասատուների դեմ մղվող պայքարի և բերքահավաքի նախապատրաստման խնդիրների շուրջը։ Հաշվի առնելու գյուղում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում բերքահավաքի մեքենաներն ու գործիքները։ բերքահավաքի շուրջը դրելու լոզունգներ, պլակատներ՝ փակցնելով գյուղի աչքի ընկնող տեղերում։

5. Ոգնել գյուղի պիոներ կոլեկտիվներին։—Գյուղական պիոներ կազմակերպությունների աշխատանքն անբավարար է, ինչպես նշեց մանկ։ կոմ։ կազմակերպությունների կենտրոյուրոյի վերջին պլենումը։ Գյուղի կոլեկտիվներում հաճախակի նորություններ բացակայում են, նոր ձևով, նոր մեթոդով չեն աշխատում, հատկապես շատ թույլ է գյուղի պիոներների մեջ նրանց հանգստի ու զվարճալիքի կազմակերպման գործը։ Այստեղ լադերի պիոներական կոլեկտիվներն իրենց գործնական աշխատանքով ոգնության պետք է հասնեն գյուղի պիոներ, կոլեկտիվների աշխատանքները բարելավելու համար։ Լադերի յուրաքանչյուր պիոներ–կոլեկտիվ պետք է մերցնի մոտակա գյուղերից մեկն ու մեկի չեֆությունը։ Սիստեմատիկորեն կոլեկտիվով, ոզակներով առանձին բրիգադներով գյուղ գնալ, զումարել գյուղի պիոներների հետ միացյալ հավա-

քույթներ, կազմակերպել գրույցներ պիոներական աշխատանքների վերակառուցման, կենտբյուրոյի պլենումի վորոշումների, աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների, ողակային աշխատանքների շուրջ: Գյուղի պիոներներին սովորեցնել խաղեր յերգեր, պարեր, ցուցադրական մարզանքներ, Ֆիզկուլտուրայի կանոններ և այլն: Ձևավորել գյուղի պիոներական ողակներն ու կոլխորհուրդը, ցուցմունքներ տալ թե նրանք ինչպես պետք է աշխատեն, աշխատանքի դրական փորձերի փոխանակություն կատարել: Այդպիսով բարելավել ու թարմացնել գյուղական պիոներ կոլեկտիվների աշխատանքները:

Ռազմաքաղաքական աշխատանքը լագերում

Պիոներական լագերի աշխատանքի բովանդակության հիմնական խնդիրներից մեկն ել յերեխաների ռազմաքաղաքական դաստիարակությունն է:

Պիոներները—ապագա կ. բանակայիններ են լինելու, մի քանի տարուց հետո Կարմիր բանակի շարքերն են մտնելու: Այս տեսակետից ել պիոներների ռազմաքաղաքական դաստիարակությունը խոշոր նշանակություն է ստանում: Այժմյանից յուրաքանչյուր պիոների զինել ռազմական քաղաքական գիտելիքներով, ակտիվ գիտակից, պատրաստված մարտիկներ տալ ինչպես Կարմիր բանակին, այնպես ել ապագա պատերազմի ժամանակ Թիկունքի պաշտպանության համար:

Պիոներական լագերն իր հնարավորություններով ու պայմաններով խոշոր նշանակություն ունի յերեխաների ռազմական դաստիարակության, պիոներներին ակտիվ, տոկուն, խիզախ, բանակային կյանքին մարժված մարտիկներ պատրաստելու տեսակետից: Մենք պետք է կազմակերպված, համառորեն ոգտագործենք այդ պայմաններն ու հնարավորությունները:

Պիոներների ռազմա-քաղաքական դաստիարակության ուղղությամբ հիմնական խնդիրներ կատանում են հետևյալները, դրույցների, ընթերցումների տարածման, «քաղաքական մուտքերի», բանավիճակախաղերի, հարց ու պատասխանի միջոցով պիոներներին սովորեցնել՝

ա. Ա. Խրխանության աստվածաբանական-հոգեբանական քաղաքականությունը, բոլոր տարերի ու ժողովուրդների նկատմամբ ունեցած բարեկամական վերաբերմունքը.

բ. պատերազմի մասնավոր, նրա տարածումները, իմպերիալիստական տերությունների՝ պատերազմի համար տենդագին պատրաստությունը, հեղափոր արևելքում տեղի ունեցող պատերազմները, Ռուսաստանի հանձնաժողովի պարտությունը, հեղափոխական շարժումները

հուժկու թափով զարգացումը արտասահմանում և այլն.

գ. ապագա պատերազմի բնույթը, ռազմական նորագույն տեխնիկայի գործողությունը, յերկրի տնտեսության զարգացման նշանակությունը՝ յերկրի պաշտպանության ամրացման գործում.

դ. պատմել փոքրիկ եպիզոդներ, պատմվածքներ՝ քաղաքացիական կռիվների փորձից, 1914 թ. իմպերիալիստական պատերազ-



Ինչպես պատրաստել մահճակալը

մից, ռուս-ճապոնական պատերազմից. նրանց պատճառները, դասակարգային արմատները և այլն.

ե. կարմիր բանակը վորպես միջազգային պրոլետարիատի զինված ուժ, ԽՍՀՄ-ի սահմանների պաշտպանության միանգամայն հուսալի ուժը. կարմիր բանակի ռազմական տեխնիկայի հզորացումը մասնավորապես առաջին հնգամյակում:

զ. յերկրորդ հնգամյակի պլանների կա-

տարման հսկայական նշանակությունը, միջազգային պրոլետարական հեղափոխության հաստատացումը, յերկրի պաշտպանունակության ամրացման և կ. բանակի տեխնիկապես ուժեղացման գործը:

Ռազմաքաղաքական-դաստիարակության



Մահճակալ՝ ցցերի վերա

հիմնական հանգուցային խնդիրները որանք են, վորոնք պետք է պարզ ու հասկանալի դարձնել յուրաքանչյուր պիոների:

Ռազմաբշավներ. ռազմական խաղեր.— Լագերում կազմակերպել տրեվոգաներ՝ ցե-

Ծղոտից գործած մահճակալ

բեկները, ռազմական խաղեր, հետախուզություն, ռազմական արշավներ, փոքր ծավալի ու պարզ մանեվրաներ, վորոնք տակտիկայի հսկայական գիտելիքներ կտան յերեխաներին:

Լաղերի պահակային գործը, որվա ռեժիմի կիրառումը ևս ռազմական-բանակային կյանքին ծանոթանալու, սովորելու լավագույն միջոցներն են: Այդ տեսակետից որվա ռեժիմի ճիշտ կիրառումը, պահակային գործի կանոնավոր կատարումը պետք է դրվի անհրաժեշտ բարձրության վրա: Ցուրաքանչյուր պիոների պետք է դաստիարակել այնպես, որ նա ճշտիվ, առանց վարկյաններ անգամ խախտելու կատարի իրեն տրված հանձնարարությունները՝ պահակային գործն ու որվա ռեժիմը:

ՍՈՑՄՐՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԱԳԵՐՈՒՄ

Աշխատանքի սոցիալիստական ձևեր ու մեթոդներ—սոցմրցման ու հարվածայնության կենսագործման հիման վրա բանվոր դասակարգը, գյուղի կոլտնտեսականները մեծագույն հաղթանակներ են ձեռք բերել տնտեսական, կուլտուրական շինարարության ճակատում, սոցմրցումն ու հարվածայնությունը այդ դարձել են աշխատանքի հիմնական մեթոդը:

Պիոներական կոլեկտիվներում, դպրոցում ևս սոցմրցումն ու հարվածայնությունը բավական լայն ծավալ են ստացել, որ ամպայման մենք պետք է կիրառենք նաև լաղերում բոլոր աշխատանքների ֆրոնտում:

Սոցմրցման ու հարվածայնության ծավալման հիման վրա, պետք է կազմակերպել ամբողջ աշխատանքն ու պայքարը, որ տարվում են լաղերի առաջ դրված հսկայական խնդիրների հաջող կենսագործման համար: Մի այն անցյալ տարվա լաղերում սոցմրցումն ու հարվածայնությունը լայնորեն կենսագործվեցին մի քանի լաղերում, որը տվեց հսկայական դրական արդյունք:

Լաղերում՝ սոցմրցումն ու հարվածայնությունը պետք է ծավալել վերից մինչև վար—լաղերի խորհրդից սկսած մինչև պիոներական ողակն ու անհատ պիոները՝ «վոչ մի պիոներ, վոչ մի ողակ ու կոլեկտիվ սոցմրցումից ու հարվածայնությունից դուրս չեպտք է մնա» լոզունգը պետք է կենսագործել: Սրա հետ միասին պետք է կիրառել Ծաղկաձորի լաղերի փորձը՝—ողակների, կոլեկտիվների ու դնդերի մինչև փոխանցիկ դրոշ սահմանելով:

Սակայն սոցմրցման ու հարվածայնության ծավալման ֆրոնտում պետք է պայքարել ձևական սոցմրցման դեմ: Խնդիրը վոչ թե սոցմրցման պայմանագրերի կնքումն է, այլ խնդիրը այդ պայմանագրերի ամենորյա ստուգումն ու կենսագործումն է: Մի այն այս կերպ հնարավոր կլինի սոցմրցումն իսկապես սոցմրցում դարձնել, աշխատանքների վորակն ու բովանդակությունը բարձրացնելու համար:

ԼԱԳԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Մինչև հիմա պիոներական լագերի խոշորագույն բացերից մեկը յեղել է, այն վոր կանոնավոր հաշվառման չեն յենթարկվել, չեն ամփոփվել ու գրի առնվել լագերային աշխատանքների արդյունքները, դրական ու բացասական փորձերը, վորոնք հսկայական նշնակություն ունեն հետագա լագերի ինչպես նախապատրաստական, այնպես ել գործնական աշխատանքները հաջողությամբ կազմակերպելու համար:

Այս թերությունն խսպառ պետք է վերացնել և կանոնավոր հիմքերի վրա դնել, լագերի նախապատրաստական աշխատանքներից սկսած մինչև լագերի վերջը, հաշվառումն ու արդյունքների ամփոփումը:

Յուրաքանչյուր պիոներ բյուրո, բաղա, կոլեկտիվ ու ողակ հատուկ նախապատրաստական աշխատանքների հաշվառման հուշատետր պետք է ունենա և նախապատրաստական աշխատանքներն սկսելու որից մանրամասն արձանագրի թե ի՞նչ արվեց լագերի նախապատրաստական աշխատանքի համար, ի՞նչպես արվեց, ի՞նչպես կազմակերպեցին աշխատանքները, ի՞նչ արդյունք ստացվեց, ի՞նչ բացեր ու բացասական կողմեր նկատվեցին: Մինչև լագեր դուրս գալն ամբողջ աշխատանքները պետք է մանրամասն ամփոփվեն այդ հուշատետրում:

Դրա հետ միասին պետք է հավաքել, կուսակցական, կոմյերիտական կոմիտեների, պրոֆմիությենական, տնտեսական ու խորհրդային մարմինների՝ լագերի մասին կայացրած վորոշումները, լագերի կազմակերպման հանձնաժողովների բոլոր արձանագրությունները և խնամքով պահել այդ մատերիալները:

Լագերի գործնական աշխատանքներն սկսելու մոմենտից յուրաքանչյուր լագերի շտաբ, գունդ, կոլեկտիվ ու ողակ նորից պետք է ունենա լագերի գործնական աշխատանքների հաշվառման հուշատետր, վորտեղ մանրամասն պետք է արձանագրվի յուրաքանչյուր որվա ռեժիմը.—ի՞նչ է արված այդ որը հերթականությամբ, ի՞նչպես է արված և ի՞նչ արդյունքներ են ստացված:

Այնուհետև լագերի փակվելուց հետո յուրաքանչյուր ողակ, կոլեկտիվ, գունդ պետք է գումարի հատուկ հավաքույթներ, վորտեղ պետք է մանրամասն ամփոփել կատարված ամբողջ աշխատանքը, նրա դրական ու բացասական կողմերը, աշխատանքի որինակելի փորձերը:

Խոշոր նշանակություն ունի յերեխաների առողջության վերաբերյալ բժշկական քննության արդյունքների ամփոփումն ու խնամքով պահելը: Նախքան լագեր դուրս գալը յերեխաների բժշկական քննության ընթացքում մանրամասն պետք է արձանագրել յուրաքան-

Հյուր պիոների առողջությունը քաջը, այնուհետև լաղերի ընթացքում մեկ անգամ ևս քննություն կատարել և 3-րդ անգամ՝ լաղերի վերջում, այդ տվյալները պետք է խնամքով պահվեն ինչպես բյուրոյում, այնպես էլ յուրաքանչյուր պիոներական կոլեկտիվում:

Պիոներական լաղերի թե՛ նախապատրաստական և թե՛ գործնական վողջ աշխատանքները մանրամասնորեն հաշվի առնելու և այդ վողջ մատերիալը խնամքով պահելու համար, անհրաժեշտ է յուրաքանչյուր բյուրոյում, բազայում ու կոլեկտիվում առանձնացնել հատուկ բրիգադ՝ այդ աշխատանքները կատարելու համար:

ՀՍՍՀ—ԿԳՊ
Մ. Ալ. Մասլյակովա
ՄՇԱԿԵՍՏՈՒ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0191535

316

ԳԻՆԸ՝ 50կ.